

**ՄԵՐ ՏԻՐՈՋ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ
ՊԸՐՊԵՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ` ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Կիրակի, Յուլիս 11ին «Պայծառակերպութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոս»ի՝ Վաղավառի Տօնին, առաւօտեան ժամը 11:00ին թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդարան: Արարողութեան մասնակցեցաւ Առաջնորդարանի Դիւանապետ՝ Արժ. Տ. Սիփան Աւագ Քինյ. Մխսեան, իսկ հիւրաբար ներկայ գնտուեցաւ բարերարուհի Տիկին Յասմիկ Ծին Պարսամ իր հարազատներով:

Սրբազան Հայրը քարոզեց օրուան խորհուրդի մասին՝ շեշտելով աղօթական կեանքի կարեւորութիւնը: Ապա ողջունեց հիւրերուն ներկայութիւնը եւ գոհունակութեամբ յայտնեց, թէ Տիկին Յասմիկ Ծին Պարսամ նուիրատուն էր Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ նոր երգեհոնին եւ թէ Սուրբ Պատարագի աւարտին անոր օրհնութիւնը պիտի կատարէր:

Սուրբ Պատարագի աւարտին «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ եւ թափօրով Սրբազան Հայրը եւ հիւրերը առաջնորդեցին դէպի Մայր Եկեղեցի, ուր Սրբազան Հայրը նախ «*հոգւոց*» աղօթքը արտասանեց հանգուցեալ Վարդգէս Պարսամի հոգիին համար, ապա օրհնութեան արարողութիւնը կատարեց նոր երգեհոնին: Սրբազան Հայրը իր հակիրճ պատգամը ուղղեց Պարսամ ընտանիքի անդամներուն՝ վեր առնելով հանգուցեալ Վարդգէս Պարսամի նուիրեալ ծառայութիւնները Արեւմտեան Թեմէն ներս: Գնահատեց, որ Տիկին Պարսամ եւ ընտանիքի անդամները նոյն ոգիով կը շարունակեն իրենց ծառայութիւնները եւ նուիրումը Առաջնորդարանին եւ Մայր Եկեղեցւոյ:

Արարողութեան աւարտին, Սրբազան Հայրը Պարսամ ընտանիքի անդամներուն նուիրեց փայտեայ խաչեր, ապա Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հիւրասիրութիւն:

**ՀԱԿԻՐԸ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴԳԷՍ ՊԱՐՍԱՄԻ**

Վարդգէս Պարսամ հարազատ որդին էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ բարերար Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի եւ ազգային այլ հաստատութիւններու:

Հանգուցեալը որպէս անդամ Լոս Անճելըս Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ, նուիրեալ ծառայութիւն մատուցած է այդ Ծուխին՝ ստանձնելով զանազան պատասխանատու պաշտօններ: Երկար տարիներ ծառայած է նաեւ թեմական մակարդակով՝ կատարելով թեմական խորհուրդի Գանձապահի եւ ապա Ատենապետի պաշտօնը: Գործօն անդամ եղած է նաեւ Հ.Բ.Ը.Միութեան, Վարդանանց Ասպետներու, Հայկական Համագումարի, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Վարչութեան եւ պատուաբեր այլ հաստատութիւններու:

Արեւմտեան Թեմէն ներս իր մատուցած երկարամեայ նուիրեալ ծառայութիւններուն որպէս գնահատութիւն, 1993ին Երջանկայիշատկ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը զինք պարգեւատրեց Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանով: Իսկ 1997ին Վարդանանց Ասպետները զինք պատուեցին որպէս «Տարուան Մարդը»:

Վարդգէս Պարսամ ծառայած է նաեւ որպէս անդամ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Յանձնախումբին եւ Արեւմտեան Թեմի Մնայուն Հիմնադրամին: Ան եղաւ Մայր Եկեղեցւոյ Կնքահայերէն մէկը: Իր բարերարութեամբ ան նաեւ օժանդակեց Թեմիս ճամբարին: Իսկ այս երկրին մէջ իր կատարած ազգանուէր ծառայութիւններուն որպէս գնահատութիւն, Մայիս 13ին, 2006 Վարդգէս Պարսամ արժանացաւ ELLIS ISLAND Պատուոյ Շքանշանին: